ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. դեկտեմբերի 5 թիվ 180 -Ա

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011 թվականի հիմնական միջոցառումների պլանի>> 2011 թվականի դեկտեմբերի 12-ին կազմակերպել և անցկացնել հատուկ տակտիկական ցուցադրական ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանության կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմայով: Հատուկ տակտիկական ուսումնավարժության կազմակերպման և անցկացման նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. 2011 թվականի դեկտեմբերի 12-ին Աշտարակի քաղաքապետարանում անցկացնել հատուկ տակտիկական ուսումնավարժություն:
2. Հատուկ տակտիկական ցուցադրական վարժանքին ընդգրկել մարզային փրկարարական վարչությունը և ստորաբաժանումները, մարզի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայությունը:
3. Մարզային փրկարարական վարչության պետին մինչև 2011 թվականի դեկտեմբերի 8-ը նախապատրաստել ուսումնավարժության բոլոր մասնակիցներին, մշակել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի հաստատմանը:
4. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ փրկարարական ծառայության գնդապետ Շ. Շամիրյանի վրա:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ